ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱՅՈՏ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՈՒՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
2011-2014ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՍԱՀԱԿՅԱՆ

ԸՆԴՈՒՆԿԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ 23.02.2011թ. N 14
ՈՐՈՇՄԱՄԲ

2011Թ.

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ռինդ (պարսկ. ռինդ- գեղեցիկ) գյուղը վերաբնակեցվել է 1840-ական թվականներից: Գյուղը գտնվում է ծովի մակ.-ից 1200-1400մ բարձրության վրա, հիմնական զբաղվածությունը այգեգործությունը,խաղողագործությունը և անասնապահությունն է: Հաճախակի են չորային , երաշտ տարիները, որից շատ են տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 1549 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 51.8 %: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ (0-6 տ) -92
2. դպրոցականներ (7-17 տ) -156
3. 18-62 տարեկաններ -999
4. թոշակառուներ -219
5. հաշմանդամներ -56
6. աշխատունակների 777

Գյուղը ունի 402 ծուխ, որոնցից 44 –ն ընդգրկված են «Փարոս» համակարգում

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի (գյուղապետի) կողմից , որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ :Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

- Աշխատակազմի քարտուղար 1 դրույք
- Գլխավոր մասնագետ 1 դրույք
- Առաջատար մասնագետ 1 դրույք
- Առաջատար մասնագետ 1 դրույք
- Առաջատար մասնագետ 1 դրույք
- էլեկտրիկ 1 դրույք
- Օպերատոր 1 դրույք
- Հավաքարար 1 դրույք

Համայնքային ենթակառույցներն են՝

Մշակույթի տուն

- Տնօրեն 1 դրույք
- Հավաքարար 1 դրույք
- Կուլտուրայի տան բակապահ 1 դրույք

Գրադարան

- Գրադարանի վարիչ 1 դրույք

• Մանկապարտեզ	
• Վարիչ	1 դրույք
• Դաստիարակ	0.75 դրույք
• Դաստիարակ	0.5 դրույք
• Դաստիարակի օգնական	1.1 դրույք
• Հաշվապահ	0.5 դրույք
• Լվացարար	0.75 դրույք
• Երաժիշտ	0.25 դրույք
• Բուժքույր	1 դրույք
• Խոհարար	1 դրույք
• Բակապահ	1 դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 23 հոգուց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.-ի թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով (տես հավելված 2)

- մշակույթի տուն
- գրադարան
- բուժկետ
- զբոսայգի
- վարչական շենք
- ջրմուղի ցանց
- ոռոգման ցանց
- գյուղ տեխնիկա և գործիքներ

Տնտեսական անկման հետևանքով, համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացավ:Պահեստամասեր և քսայուղեր չլինելու հետևանքով անմխիթար վիճակում են գյուղի տեխնիկան ու գործիքները: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1968 թ.-ին, որի մաշվածությունը այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 30 %-ի: Անձրևաջրերը ու կեխտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց , որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:

Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 1.8 կմ ճանապարհ, 250 մ պատնեշ և փողոցները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է 10օրը մեկ՝ համայքի բնակելի տարածքում: Չկան խողովակներ, կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ներքին ցանցերի վերանորոգման համար:Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով՝ ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 298 առանձնատուն, 31400 հազ.քմ. բնակ. տարածքով : Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 70 -ից ավելի է , որը տարեցտարի աճում է :Կան բազմաթիվ բնակելի տներ, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն վերանորոգվել:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

• Համայնքի վարչական տարածքը	4500.07 հա, որից
• Վարելահողեր	333.5 հա
• Խոտհարք	49.38 հա
• Արոտավայրեր	1121.46 հա
• Անօգտագործելի հողեր	2729.09 հա
• Այլ նշանակության	118.41 հա
• Տնամերձ հողեր	148.23 հա
• մեկ հողաբաժնի չափը	0.65 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման ջուր չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ. մթերքների արտադրությունը: Հիմնականանում զբաղվում են խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, ցորենի , գարու, առվույտի, կարտոֆիլի , և այլ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքներից: Անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 50 %-ը:
Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս :Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում:Խոտ և խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային կազմակերպումը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց, վերջին տարիներին վերանորոգված, բարվոք վիճակում, ուր սովորում են 156 աշակերտ: Մեկ ուսուցչին՝ 8 աշակերտ:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի մեկ մշակույթի տուն , շենքը բացի տանիքից ունի կապիտալ վերանորոգման կարիք, որի պատճառով համայնքը զրկվել է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից: Գործող գրադարանն ունի 8290 անուն գիրք, շենքը գտնվում է բարվոք վիճակում:
Սպորտային հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից: Ֆուտբոլային խաղերը կազմակերպվում են դպրոցի մարզահրապարակում , որը միշտ զբաղեցնում են դպրոցականները :

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժ. կետ: Շենքը կառուցվել է 40 տարի առաջ, չկա համապատասխան գույք և սարքավորումներ : Բուժ կետն ունի երկու աշխատող:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքն ունի ավելի քան 115 բուհի շրջանավարտ, տարբեր մասնագիտությամբ, որոնք կարողանում են կազմակերպել կրթության, դաստիրակության , մշակութի և շինարարական աշխատանքներ:
- Գյուղից 15 կմ վերև կա քարի հանք, որը կարելի է օգտագործել գյուղի համար .
- Գյուղում կան 10-18–րդ դարի մատուռ , 1941-45 թթ Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան-կոթող բազմաթիվ խաչքարեր, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը գյուղում:
- Երևանից գտնվում է 115 կմ հեռավորության վրա: Մայրուղուց մինչև գյուղ հասնող ճանապարհը բարվոք վիճակում է:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ճանապարհների , խմելու ջրի և ոռոգման ջրի ցանցերի անմխիթար վիճակ
- Ծնելիության նվազում՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
- Գործազրկություն
- Հողերի անջրդիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում
- Գյուղատեղ- արոտավայրեր ճանապարհների անմխիթար վիճակ
- Արոտավայրերի անմխիթար վիճակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Մեծ քանակությամբ ջրի ամբարման հնարավորություն (եթե մեծացվի լիճը)

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը (կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր)
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը
- Ոռոգման ջրագծերի բացակայություն
- Արոտավայրերի աստիճանաբար քայքայվելը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը
Բարեփոխումներ կատարելով , նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- Համայնքը ապահովել շուրջօրյա խմելու ջրով՝ կանխելով սուր վարակիչ հիվանդությունները
- Ապահովել ոռոգման ջրով
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը
- Բարելավել արոտավայրերը
- Գյուղ. մթերքների վերամշակման արտադրամասերի հիմնում
- Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ , ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

1. Ռինդ -Չիվա ճանապարհի 1.8 կմ հատվածի 250 մ պատնեշի կառուցում
2. Մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգում
3. Ոռոգման համակարգի բարելավում
4. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
5. Հանգստի գոտու կառուցում
6. Գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
7. Գյուղ - մթերքների վերամշակման արտադրամասերի հիմնում
8. Փողոցների լուսավորում
9. Համայնքի գազաֆիկացում
10. «Ձնդրաղաջ» կոչվող տարածքի մատուռի վերանորոգում
11. Արվեստի դպրոցի հիմնում
12. Անասունների համար գերեզմանոցի կառուցում
13. Ուլգյուր-Ռինդ խմելու ջրագծի կապիտալ վերանորոգում
14. Նպաստել համայնքի կարիքավոր և երիտասարդ ընտանիքների համար բնակարանների կառուցմանը
15. Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում
16. Արոտավայրերի բարելավվում

4.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանասական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

հազ. դրամ

	Եկամուտ	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ	26142.7	25587.8	28864.2	

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

<<	Ցուցանիշներ	Չափի միավոր	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.		
	1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	4366.92	4500.07	4500.07			
2	Բնակչության թիվը	մարդ	1628	1554	1549			
3	Ծնունդը	մարդ	13	18				
4	Մահացությունը	մարդ	9	20				
5	Աշխ.ռեսուրսներ, այդ թվում	մարդ						
6	ա)զբաղվածությունը ըստ տնտեսական ճյուղերի	մարդ						
7	գործազրկության մակարդակը	%	60	65	70			
8	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	5	4	4			
9	Պահուստային հողեր	հա	14.91	14.91	14.91			
10	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%						
11	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	15	15	15			
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողերը	կմ	180	260	260			
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	9	11	11			
14	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	9	11	11			
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ.քմ	31400	31400	31400			
16	Բնակ.կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	70	70	70			
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	100	100	100			
18	Ջրի կորուստները ցանցում	%	30	30				
19	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	182	163	156			
20	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	23	30				
21	Գյուղապետարանի և ենթակա կառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	23	23	23			

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Գյուղապետարանի շենք
2. Մշակույթի տուն
3. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ
4. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ
5. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
6. Ներհամայնքային կամուրջներ
7. Հուշարձան
8. Հանգստի գոտիներ
9. Գյուղ. տեխնիկա և գործիքներ
10. Գերեզմանատուն

1.Համայնքի իրավիճակի գնահատում

* վարչական տարածքը – 4500.07 հա
* մարզը-Վայոց Ձոր
* հեռավորությունը մարզկենտրոնից – 25 կմ
* կլիման –կիսաանապատային

<u>Ժողովրդագրություն</u>

- համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝

▪ կանայք	747
▪ տղամարդիկ	802
▪ թոշակառուներ	219
▪ փախստականներ	-
▪ միակողմանի ծնողազուրկ երեխաներ	5
▪ երկկողմանի ծնողազուր երեխաներ	-
▪ հայրենական պատերազմի վետերաններ	2
▪ հաշմանդամներ	56
▪ նպաստառուներ	44
▪ զոհված ազատամատիկներ ընտանիքներ	3
▪ աշխատունակ բնակչության թիվը	777
▪ աշխատանք ունեցողների թիվը	75
▪ գործազուրկներ	702

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականության գույքը սահմանվել է << կառավարության 14.03.1997թ. 51 որոշմաբ

Բնակարանային տնտեսություն

- Համայնքի բնակ.ֆոնդ 31400 քմ
- Առանձնատների թիվը -298
- Կիսակառույց առանձնատների թիվը -15
- Բնակարանի կարիքավորների թիվը-70

- Գյուղատնտեսության ճյուղերը
  * անասնապահություն
  * այգեգործություն
  * և այլն
- Համայնքն ունի շուրջ 801 գլուխ խոշոր եղջերավոր և 261 գլուխ մանր եղջերավոր անասուններ
- Արտադրվում է խաղող, պտուղ, բանջար բուստանային և հատիկաընդեղային մշակաբույսեր
- Դաշտային ճանապարհների վիճակը – կարիք ունի վերանորոգման
- Համայնքի վարելահողերից ոռոգելի է 25 %-ը

Ջրամատակարարում և շրջակա միջավայրի պահպանություն

- Համայնքային ջրամատակարարման և կոյուղու համակարգի վիճակը
- Ջրի կորուստները – 30%
- Ջրամատակարարումը – ինքնահոս
- Խմելու ջրի ջրավազանների քանակը՝ 1 հատ - 250 մ^3 տարողությամբ, վիճակը բավարար
- Ջրի օրական ծախսը մեկ շնչի հաշվով-լիտր-100
- Աղբահանությունը կատարվում է 10 օրը մեկ անգամ
- Կանաչապատ տարածքները - 220 հա

Կրթություն

- Նախադպրոցական հիմնարկների թիվը 1
- Ընդհանուր միջնակարգ դպրոցների թիվը 1
- Ընդհանուր միջնակարգ դպրոցների շենքերի վիճակը-բավարար

Մշակույթ, սպորտ

Մշակութային և սպորտի բնագավառում համայնքում գործում են.

- Գրադարան (նշել քանակը-1, շենքի վիճակը-բավարար, հաճախող երեխաների թիվը -7 մեկ օրվա ընթացքում և աշխատակազմի թիվը-1)
- Մշակույթի տուն -1 և այլն